ԿԱՍՊԵՐԻ ԵՎ ԿԱՍՊԻԱՆԱ (ԿԱՍՊՔ) ՄԱՐԶԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱԼԵՔՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Անտիկ և միջնադարյան հեղինակները՝ սկսած Հերոդոտից, բազմիցս հիշատակել են կասպերին և Կասպիանա (Կասպք) մարզը։ Դրանց էթնիկական ինքնության և տեղադրության պարզումը մեծ նշանակություն ունի Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես Աղվանքի հնագույն պատմության որոշ հարցեր ճշտելու գործում։ Հատկապես կարևոր է Կասպիանայի՝ Աղվանքին պատկանելու հարցը, որի մասին հայտնում է Ստրաբոնը։ Աղվանքի նկարագրության մեջ նա գրում է. «Աղվանքի մի մարդն է Կասպիանան՝ անվանված կասպերի ցեղի անունից, որոնցից իր անունն է ստացել նաև ծովը, և որոնք ներկայումս անհետացած են»[1]։ Կասպիանա երկիրն ուսումնասիրողներից շատերը նույնացնում են Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի հետ[2]։ Նման տեղադրության հիմք է ծառայում այն հանգամանքը, որ Ստրաբոնը մի անգամ էլ է հիշատակում Կասպիանա մարզը՝ այս անգամ հայոց Արտաշես I թագավորի նվաճումների պատմությանը նվիրված հատվածում («մարերից գրավեցին Կասպիանան, Փավնիտիսը և Բասորոպեդանն»)[3]. ընդ որում, այդ հատվածի Կասպիանայի համապատասխանությունը աղբյուրների Փայտակարան աշխարհի հետ անկասկած է։ Որպես կասպերի երկրի այսպիսի տեղադրության հիմք ուսումնասիրողները մատնանշում են նաև Պլինիուս Ավագի և Պտղոմեոսի տեղեկությունները։

Ստրաբոնի՝ Կասպիանայի նման տեղագրությունից ուսումնասիրողներից ոմանք եզրակացնում են, որ Աղվանքի թագավորությունն անտիկ ջրջանի մի հատվածում իր կազմում է ունեցել Փայտակարանը՝ տարածվելով Կուրից ու Արաքսից հարավ[4]։ Հիմք ունենալով կասպերի փայտակարանյան տեղադրությունը, գիտնականները փորձում են որոշել ըստ Ստրաբոնի Կասպից ծովին իր անունը տված ժողովրդի էթնիկական դեմքը։ Տարածված է այն կարծիքը, թե կասպերը պատկանել են կասիտա-էլամական ժողովուրդներին։ Ըստ Ի. Դյակոնովի՝ կասպ-կասբ արմատը բաղկացած է կաս+բ մասնիկներից, ուր կաս-ը կասիտների անվանումն է, իսկ բ-ն՝ էլամական ցեղանուններին հատուկ վերջածանց (ինչպես լուլու+բ)[5]։ Ե. Հերցֆելդը գտնում է, թե ասա

---

[1] Strab. XI, 4, 5.

[2] *Հ. Հիբշման, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 105*; A. Herrmann, Kaspioi I (Pauly-Wissowa-Kroll Realencyclopädie der classischen Altertumswissenschaft (*այսուհետև՝* PWK), Hb. 20. Stuttgart, 1919, S. 2272—2274); К. В. Тревер, Очерки истории и культуры древней Кавказской Албании, М.—Л., 1959, с. 51; И. М. Дьяконов, История Мидии, М., 1956, с. 447, прим. 5; *Ս. Տ. Երեմյան, «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 271, ծան. 103)*; *Բ. Ուլուբաբյան, Կասպեր («Հայկական Սովետական Հանրագիտարան» (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 5, Երևան, 1979, էջ 277)։*

[3] Strab. XI, 14, 5.

[4] A. Herrmann, *նշվ. աշխ. էջ 2274*; З. И. Ямпольский, Албания Кавказская («Советская Историческая Энциклопедия», т. I, М., 1961, с. 353); К. Алиев, Кавказская Албания, Баку, 1974, с. 139.

[5] И. М. Дьяконов, *նշվ. աշխ., էջ 103, ծան. 3։*

մասնիկը մարբերենում ուղղակի տալիս է ասպ, այդտեղից էլ կասս-ից (կասիտների անվանումը)՝ կասպ[6]։ Կ. Թումանովը և Ռ. Հյուսենը ամբողջ Անդրկովկասում ենթադրում են կաս-կասպական ցեղերի տարածման մեծ շրջան[7]։ Սակայն կասպերին և Կասպիանան հիշատակող աղբյուրների համադիր քննությունը ցույց է տալիս, որ գրականության մեջ ընդունված և ավանդական դարձած կասպերի տեղադրությունը ենթակա է վերանայման։ Այդ տեղադրությունը չի հաստատվում անգամ միայն Ստրաբոնի, Պլինիուս Ավագի ու Պտղոմեոսի տեղեկությունների քննությամբ։

Ստրաբոնը, բացի վերը բերված հատվածից, կասպերին հիշատակում է ևս մի քանի անգամ։ Կասպից ծովի ափերին բնակվող ժողովուրդներին թվարկելիս նա գրում է. «Ծովի ափին հիրկաններից հետո ապրում են ամարդները, անարիակները, կադուսները, աղվանները, կասպերը, ուիտները և մինչև սկյութները, հնարավոր է, ուրիշ ժողովուրդներ»[8]։ Այս թվարկման մեջ կասպերն ընկնում են աղվաններից այն կողմ, այսինքն հյուսիս, և ոչ թե հարավ՝ Փայտակարանում։ Մի այլ հատվածում Ստրաբոնը գրում է. «Էրատոսթենեսի խոսքերի համաձայն, տեղացիները Կովկասը կոչում են Կասպիոն, հավանաբար այդպես վերանվանելով կասպերի անունից»[9]։ Էրատոսթենեսի ու Ստրաբոնի բերած տվյալներով կասպերին անհրաժեշտ կլիներ տեղադրել աղվաններից հյուսիս՝ Կովկասյան լեռների և Կասպից ծովի միջև։ Նման տեղադրության հետ համընկնում են Պոմպոնիուս Մելայի (մ. թ. I դ.) և Դիոնեսիոս Ալեքսանդրացու (մ. թ. II դ.) վկայությունները։ Նկարագրելով Կասպից ծովի ափերը, Մելան գրում է. «Կասպից ծովը... բաժանվում է երեք ծովածոցի. անմիջապես նեղուցի դիմաց Հիրկանյանն է, դեպի ձախ՝ Սկյութականը, դեպի աջ՝ այն, որին նեղ իմաստով տրվում է ծովի անունը՝ Կասպիական...։ Կասպիական ծոցի ափին ապրում են կասպերը և ամազոնուհիները..., Հիրկանյան ծոցի ափին՝ աղվանները, մոսխերը, հիրկանները, Սկյութականի ափին՝ ամարդները, պեստիկները...»[10]։ Կասպերը, ինչպես տեսնում ենք, տեղորոշվում են ծովափով աղվաններից հյուսիս։ Մեկ այլ հատվածում Մելան հայտնում է կասպերի՝ Կովկասյան լեռների մոտ բնակվելու մասին. «[Կովկասյան լեռները] կոչվում են Կերաունյան, իսկ այլ հատվածներում՝ Տավրյան, Մոսխական, Ամազոնական, Կասպիական, Կորաքսյան և Կովկասյան. ինչպես որ նրանք հարում են այս կամ այն ժողովրդին, այնպես էլ ստանում են այս ու այն անունը»[11]։

Դիոնեսիոս Ալեքսանդրացին տալիս է Կասպից ծովի ափի ժողովուրդների հետևյալ թվարկումը. «Առաջինը սկյութներն են..., հետո՝ ունները, ապա կասպերը, սրանցից հետո՝ մարտատենչ աղվանները և կադուսները, որ ապրում են լեռնային երկրում. նրանց մոտ՝ մարգերը, հիրկանները, տապյուրները»[12]։ Նույն թվարկմանը հանդիպում ենք նրա հետևորդների՝ Նիկեփորոս Բլեմիդոսի, Եվստաթիոսի, Պրիսցիանուսի երկերում[13]։

---

[6] E. Herzfeld, The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 195.

[7] C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Washington. 1963, p. 55, R. H. Hewsen, Caspiane, an historical and geographical Survey (*«Հանդես ամսօրյա», 1973, էջ 91*)։

[8] Strah. XI, 8, 8.

[9] *Նույն տեղում, 2, 5։*

[10] Pomp. Mela, III, 38—39.

[11] *Նույն տեղում, I, 109 (բնագրային ընդգծումներն ամենուր մերն են—Ա. Հ.)։*

[12] Dion. Perieges, v. 725—732.

[13] В. В. Латышев, Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе, т. I, СПб, 1893—1900, с. 207, 290, т. 2, СПб, 1904—1906, с. 439.

Նախընթաց քննությունից պարզ է դառնում, որ կասպերի տեղադրությունը Փայտակարանում Ստրաբոնի վկայություններից բխող գոնե միակ հնարավոր եղրակացությունը չէ։ Էրատոսթենեսի, Մելայի և Դիոնեսիոսի տեղեկություններով հաստատվող Ստրաբոնի այլ վկայություններ հիմք են տալիս կասպերին տեղադրելու հյուսիսից աղվանների հարևանությամբ, Կովկասյան լեռների մոտ։ Նշենք, որ Ստրաբոնը հիշատակում է նաև Կասպիական դարպասները Պարախոաթրես (Էլբուրս) լեռներում, Փայտակարանից շատ արևելք, Մարաստանի ու Պարթևքի (կամ Հիրկանիայի) սահմանին[14]։

Պլինիուս Ավագն Աղվանքի գետերը հիշելուց հետո գրում է. «Կիրոսից (Կուրից—Ա. Հ.) սկսած ծովը ստանում է Կասպիական անունը. ափին ապրում են կասպերը»[15]։ Այս վկայությամբ կասպերը տեղադրվում են Փայտակարան-Կասպիանայի տարածքում։ Սակայն ամբողջական ենթատեքստից երևում է ավելի բարդ պատկեր։ Նկարագրելով Կասպից ծովը՝ Պլինիուսը (ինչպես վերը բերված հատվածում՝ Մելան) ծովափերն անվանում է դրանք բնակեցնող ժողովուրդների անուններով։ Հյուսիսային նեղուցի[16] երկու ափերը Պլինիուսը կոչում է Սկյութական, «որովհետև ափերին ապրում են սկյութական ժողովուրդներ»։ Սկյութներից հարավ ապրում են աղվաններ. «նրանց առջև ընկած ծովի հատվածը կոչվում է Աղվանական»[17]։ Նրանցից հետո «ծովը ստանում է Կասպիական անունը. ափին ապրում են կասպերը»[18]։ Շարունակելով ծովափնյա ցեղերի թվարկումը, Պլինիուսն ավելացնում է. «Հետո տապիրներ, անարիակներ, ստավրներ, հիրկաններ, որոնց ափերից, Սիդեր գետից սկսած ծովը սկսում է կոչվել Հիրկանյան»[19]։ Ինչպես տեսնում ենք, Պլինիուսը կասպեր է համարում աղվանների և հիրկանների միջև ընկած ամբողջ ծովափնյա հատվածի բնակչությանը, այսինքն՝ իր իսկ և այլ աղբյուրների հիշած կադուսներին, մարդերին, անարիակներին, տապուրներին, ստավրներին[20]։ Ընդ որում, եթե կասպեր ասելով Պլինիուսը հասկանում է նախ և առաջ դրանցից մեկին, ապա դա ոչ թե Փայտակարանի բնակչությունը պիտի լինի, այլ՝ Կասպիական դարպասների (Դեդուկ) մոտ ընկած տարածքի, ինչպես երևում է ուսումնասիրողների աչքից վրիպած մի հատվածից, որտեղ կարդում ենք. «Դարպասներից դուրս եկողներին անմիջապես ընդունում է կասպերի ցեղը՝ [տարածված] ընդհուպ մինչև ծովափ, որը տվել է իր անունը դարպասներին և ծովին»[21]։

Կասպերի մասին Պտղոմեոսի տեղեկությունը հետևյալն է. «[Մարաստանի] արևմտյան մասը Հայաստանի մոտ զբաղեցնում են կատպերը, որոնցից ներքև ընկած է Մարգիանան (անկասկած պիտի լինի՝ Մատիանան—Ա. Հ.) ամբողջ Ասորեստանյան կողմի երկայնքով, իսկ ծովափը՝ կադուսները,

---

14 Ըստ աղբյուրների՝ Կասպիական դարպասները համապատասխանում են Թեհրանից արևելք ընկած լեռնանցքներից մեկին՝ Դեդուկին, որով անցնում է Թեհրան—Գորգան երկաթուղին, կամ Սիդարային, որով անցնում է Թեհրան—Մեշխեդ երկաթուղին։ Չնայած աղբյուրների տեղեկությունների երկակիությանը, կարելի է հաստատապես ասել, որ սկզբնապես Կասպիական պիտի կոչված լիներ առաջին լեռնանցքը։

15 Plin. Nat. Hist. VI, 39.

16 Անտիկ աշխարհագրական ավանդույթի մեջ մինչև Պտղոմեոս, և նրանից հետո էլ, ընդունված էր համարել, թե Կասպից ծովը հյուսիսում նեղուցով կապված է Հյուսիսային օվկիանոսի հետ։ Բացառություն է կազմում միայն Հերոդոտը։

17 Plin. Nat. Hist. VI, 38.

18 Նույն տեղում, 39։

19 Նույն տեղում, 46։

20 Հմմտ. И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 448։

21 Plin. Hat. Hist. VI, 44. Կասպիական դարպասներ ասելով Պլինիուսն անվերապահորեն հասկանում է Էլբուրսի լեռնանցքը (նույն տեղում, 40; 46)։

գելերը և դրիբիկները, որոնց հետևում դեպի աշխարհամասի խորքն են տարածվում ամարիակների և մարդերի հողերը։ Կադուսներին հարևան մարդը զբաղեցնում են կարդուխները...»[22]։ Պտղոմեոսը Փայտակարանի տարածքը ցույց է տալիս Մեծ Հայքի կազմում՝ Մարաստանի հետ սահմանը գծելով Արաքսից հարավ[23]։ Բերված հատվածի համաձայն, Փայտակարանին հարավից ծովափով անմիջապես հարում են կադուսները, որոնցից արևմուտք կարդուխներն են։ Ուրեմն, վերջիններից արևմուտք պիտի տեղադրվեն կասպերը։ Դա Պտղոմեոսի Կասպիական կոչած լեռների մոտակայքն է, լեռներ, որոնք գտնվում էին Հայքի և Մարաստանի սահմանին։ Այդ շրջանը պիտի համապատասխանի Ուրմիայից արևելք ընկած տեղանքին։ Նշենք, որ Պտղոմեոսը հիշատակում է նաև Կասպիական դարպասները 94° և 37° կոորդինատներով, այսինքն՝ Մարաստանի և Պարթևքի սահմանին[24]։

Այսպիսով, տեսնում ենք, որ կասպերի ավանդական փայտակարանյան տեղադրությունը սկզբնաղբյուրների տեղեկություններից անվերապահորեն բխող մտահանգում չէ, այլ ընդամենը Ստրաբոնի մի հատվածի և հայկական աղբյուրների նշած Փայտակարան-Կասպքի համընկնումից կատարված եզրակացություն։ Վերը բերված վկայություններից երևում է նաև, որ մ. թ. I—II դդ. հեղինակների տեղեկությունները կասպերի մասին մեծ չափով նրանց մտահանգումների արդյունք են, քանի որ կասպերը, ինչպես ասում է Ստրաբոնը, արդեն անհետացած էին։ Ուրեմն, այդ ժողովրդին իր ապրած տարածքում և պատմական իրադրությունների մեջ տեսնելու համար պիտի դիմենք ավելի վաղ սկզբնաղբյուրների։ Էրատոսթենեսը (մ. թ. ա. III դ.) հիշատակում է Կասպիական դարպասները, ինչպես նաև Կասպիոն լեռը, որը համապատասխանում է ժամանակակից Կովկասյան լեռներին և վերջիններիս միջին մասում ընկած գագաթներից մեկին[25]։ Սակայն այս հեղինակի խոսքերի ենթադրական տոնը («տեղացիները Կովկասը կոչում են Կասպիոն, ճավանաբար այդպես վերանվանելով Կասպերի անունից») ցույց է տալիս, որ նա էլ կասպերին հաստատապես չգիտի։

Ավելի վաղ ժամանակի են Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկիցների գործերը։ Վերջիններս մեզ չեն հասել, սակայն դրանցից ընդարձակ քաղվածքներ են բերում ուշ շրջանի հեղինակները՝ Դիոդորոս Սիկիլիացին, Պոմպեոս Տրոգոսը (Հուստինոս), Կուրցիոս Ռուֆուսը, Արրիանոսը, Պլուտարքոսը և ուրիշներ։ Այդ քաղվածքներում կասպերը չեն հիշատակվում, համենայն դեպս, մակեդոնացիները նրանց չեն հանդիպել թեպետ անցել են Մարաստանով, Կասպիական դարպասներով ու Հիրկանիայով[26]։

Ավելի վաղ հեղինակներից հետաքրքիր վկայություն ունի Կտեսիաս Կնիդացին (մ. թ. ա. V դ. վերջ—IV դ. սկիզբ)։ Պատմելով Ասորեստանի առասպելական Նինոս թագավորի նվաճումների մասին, Կտեսիասը տալիս է ժողովուրդների ու երկրների հետևյալ թվարկումը, օգտագործելով, իհարկե, իր ժամանակի տերմինաբանությունը. «Նինոսը նվաճեց... Եգիպտոսը և Փյունիկիան... տիրեց կադուսների ու տապլուրների հողերին... անցավ նաև Պարսը, սուսիանան և այսպես կոչված Կասպիանան, դեպի ուր տանում է խիստ նեղ մի անցք, որն այդ պատճառով կոչվում է Կասպիական դարպասներ»[27]։ Այսպիսով, Կտեսիասը Կասպիանա է անվանում Կասպիական դարպասներից

---

[22] Ptol. Geogr. VI, 2, 5.

[23] Նույն տեղում, V, 12, 3։

[24] Նույն տեղում, VI, 2, 4։

[25] Strab. II, 1, 39; XI, 2, 13. Գայթակղիչ է կասպ արմատը տեսնել կադրեկ լեռնանվան մեջ, ինչպես առաջարկում է Ե. Հերցֆելդը (E. Herzbeld, նշվ. աշխ., էջ 197).

[26] Հմմտ. Diod. XVII, 75—76. Arr. Anab., III, 23—25. Plut. Alex. 44—45 և այլն։

[27] Հմմտ. Diod. II, 3.

այն կողմ, այսինքն Կասպից ծովի և Էլբուրսի միջև ընկած մարզը, դրանից բխեցնելով դարպասների անունը։ Սակայն նա էլ չի հիշատակում կասպերին։

Վերջիններիս մասին անտիկ հեղինակներից ամենահավաստի տեղեկություններ է տալիս միայն Հերոդոտը (մ. թ. ա. V դ.)։ Աղբյուրագիտական իմաստով Պատմահոր վկայությունները վստահություն են ներշնչում, քանի որ ընդամենը մի քանի տասնամյակ առաջ կասպերը եղել էին հունաց հողում, և նրանց պիտի տեսած լինեին այն մարդիկ, որոնց պատմություններն աղբյուր են ծառայել Հերոդոտին։ Այս հանգամանքը հիմք է տալիս հուսալու, որ Հերոդոտի տեղեկություններից պիտի պարզենք կասպերի ինչպես բնակության շրջանը, այնպես էլ էթնիկական դեմքը։

Ըստ Հերոդոտի՝ կասպերը Քսերքսեսի բանակում ծառայում էին ինչպես հետևակում, այնպես էլ հեծելազորում[28]։ Կասպերն ապրում էին Աքեմենյան պետության երկու՝ XI և XV սատրապություններում։ Հերոդոտը գրում է. «կասպերը, պավսիկները, պանտիմաթները և դարեյտները, այս բոլորը կազմում էին մեկ՝ տասնմեկերորդ մարզը, մուծում էին [արքայական գանձարան] 200 տաղանդ»[29], «սակերը և կասպերը, որ կազմում էին տասնհինգերորդ մարզը, մուծում էին 250 տաղանդ»[30]։

Աքեմենյան որոշ սատրապությունների, այդ թվում և XI-ի և XV-ի տեղադրությունը ստույգ որոշված չէ։ Դա արդյունք է այն հանգամանքի, որ Հերոդոտի նշած սատրապությունները երբեմն չեն համապատասխանում Կտեսիասի, Քսենոփոնի, Ալեքսանդրի ուղեկիցների, Բեհիսթունյան արձանագրության և այլ աղբյուրների տվյալներին, չնայած ընդհանուր առմամբ համապատասխանությունն ակնառու է[31]։ Այդ սատրապությունների տեղադրման ուղղությամբ կատարած մեր աշխատանքը թույլ է տալիս գրականության մեջ արտահայտված կարծիքներից առավել ընդունելի համարել հետևյալները. XI սատրապությունն ընդգրկում էր Կասպից ծովի հարավային, իսկ XV-ը՝ հարավ-արևելյան ափերը։ Նման հետևությունները հենվում են հետևյալ դատողությունների վրա։ 1. Հերոդոտի հիշատակած կասպերը պիտի տեղադրվեն Կասպից ծովի ափերին. Պատմահայրը նման ուղղակի պնդում չունի, սակայն այդ է ցույց տալիս անունների համահնչյունությունը։ Հերոդոտն առաջիններից մեկն է, որ ծովը կոչում է Կասպից (ավելի ճիշտ՝ Կասպիա)։ 2. Երկու սատրապությունների կասպերը պիտի հարևան լինեին, քանի որ Քսերքսեսի բանակի նկարագրության մեջ կասպերի մասին խոսվում է, որպես մեկ ամբողջության։ Եթե կասպերն ապրեին իրարից հեռու երկու խմբով, ապա դժվար կլիներ հասկանալ մի ջոկատում նրանց կռվելը։ Մյուս կողմից, Հերոդոտը գիտի այն ժողովուրդներին, որ թեպետ ունեն միևնույն անունը, սակայն ապրում են տարբեր երկրներում։Այսպես, նա պատմում է եթովպների մասին, որ ապրում են Աֆրիկայում ու Ասիայում, և լավ գիտի նրանց նմանություններն ու տարբերությունները[32]։ 3. Հետազոտողների մեծամասնությունը XI սատրապությունը տեղադրում է Կասպից ծովի հարավային ափերին, որը գլխավորապես հիմնավորվում է այդ սատրապության մեջ կասպերի հարևանների տեղադրությամբ[33]։ Պտղոմեոսն ու Պլինիուսը թեթե-

---

28 Her. VII, 67; 86.

29 Նույն տեղում, III, 92։

30 Նույն տեղում, 93։

31 Տեղադրության և գրականության մասին ծավալում տե՛ս И. М. Дьяконов, Նշվ. աշխ., էջ 340—361։

32 Her. VII, 69—70.

33 A. Herrmann, Նշվ. աշխ., էջ 2273, И. М. Дьяконов, Նշվ. աշխ., էջ 345, 447, Геродот, История (в девяти книгах), перевод и комментарии Г. А. Стратановского, Л., 1972, с. 517, прим. 58.

վակի հիշում են դարեյանների մարզը Կասպից ծովի հարավային ափին[34]։ Ե. Հերցֆելդը Παντιμάθοι-ից վերականգնում է Πατιπάνθοι, որն էլ հասկանում է որպես «ճանապարհի, անցքի մոտ ապրողներ», և նրանց տեղադրում Կասպիական դարպասների մոտերքում[35]։ 4. XV սատրապության տեղը հնարավոր է որոշել նրա հիմնական բնակչության՝ սակերի, տեղադրմամբ։ Ուսումնասիրողներից ոմանք գտնում են, թե Հերոդոտի հիշատակած սակերն անդրկովկասյան սկյութներն են[36]։ Սակայն նման տեսակետը դանց է առնում այն հանգամանքը, որ բոլոր անտիկ աղբյուրներն աքեմենյաններին ենթակա սակերին տեղադրում են Միջին Ասիայում։ Այստեղ էր ընկնում նաև Բեհիսթունյան արձանագրության մեջ հիշատակված Սակա սատրապությունը[37]։ Բայց Միջին Ասիայում էլ սատրապության տեղը տարաձայնությունների առարկա է։ Գիտնականներից ոմանք այն տեղադրում են Պամիրում կամ Տյանշանում՝ Պտղոմեոսի հիշած կասպեյրների երկրում, կամ Սիր-Դարյայի աջ ափին՝ ըստ սակերի ստրաբոնյան տեղադրության[38]։ Սակայն այդ դեպքում բավականին անհամոզիչ է թե՛ Աքեմենյանների տիրապետության այդքան հեռու թափանցելու հանգամանքը, թե՛ կասպեյրների համադրությունը կասպերի հետ և թե՛ Ստրաբոնի՝ ուշ շրջանի վիճակն արտահայտող վկայությունների օգտագործումը։ Առավել հավանական է թվում Սակայի տեղադրությունն Արևմտյան Թուրքմենիայում, քանի որ միայն այնտեղ է աղատ տարածք մնում աքեմենյանների միջինասիական մյուս սատրապությունների (Բակտրիա, Սոգդիանա, Խորեզմ, Պարթևք, Արիա) տեղադրումից հետո։ Սակերին այս հատվածում են տեղորոշում աքեմենյանների վաղ շրջանի պատմության աղբյուրները[39]։ Քսենոփոնի տեղեկությունների համաձայն սակերն ապրում էին հիրկանների հարևանությամբ[40]։ Ըստ Կտեսիասի Կյուրոսի վերջին ճակատամարտը տեղի ունեցավ դերբիկների դեմ[41]։ Մարտում Կյու-

34 Ptol. Geogr. VI, 2, 6. Plin. Nat. Hist. VI, 46; 95.

35 E. Herzfeld, նշվ. աշխ., էջ 193։

36 В. В. Струве, Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Л., 1968, с. 18—20; А. П. Новосельцев, Генезис феодализма в странах Закавказья, М., 1980, с. 90.

37 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 345, 359 և այլն։

38 A. Herrmann, Kaspioi 2 (PWK, Hb. 20, Stuttgart, 1919, S. 2274—2275) Ե. Տ. Երեմյան, Աքեմենյանների պետությունը (քարտեզ), (ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 163)։

39 Սակերին Միջին Ասիայի այլ մարզերում տեղադրող պատմաբանները հենվում են ուշ շրջանի հեղինակների վկայությունների վրա։ Ստրաբոնը, օրինակ, սակերին հիշատակում է Ցաքսարտից այն կողմ՝ Սոգդիանայի դիմաց (Strab., XI, 8,8)։ Բայց նույն հեղինակը, ինչպես նաև անտիկ այլ պատմիչներ գրում են, որ սակ են անվանվում Միջին Ասիայի բոլոր քոչվոր սկյութական ցեղերը (Her. VII, 64. Strab. XI, 8, 2. Plin. Nat. Hist. VI, 50) Այդ գաղափարի իրավացիությունը հաստատվում է սակ տերմինի քննությամբ. «սակա» նշանակում է թափառական, քոչվոր (O. Szemerenyi, Four old iranian ethnic Nams: Scythian-Skudra-Sogdian-Saka. Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, Wien, 1980, S. 45)։ Նման պայմաններում դժվար չէ համոզվել, որ, ավելի մոտիկից ծանոթանալով միջինասիական ժողովուրդներին, անտիկ հեղինակներն իմանում և օգտագործում էին նրանցից առավել մոտ ընկածների մասնավոր անունները, և սակ անվանումը տրվում էր ավելի ու ավելի հյուսիս և արևելք ապրող ցեղերին։

40 Հիրկանները Կյուրոսին հայտնում են. «(Ասորեստանի) ամենամոլի թշնամիները կաղուսներն են... դե, և, իհարկե, մեր հարևան սակերը» (Xenoph. Cyr. V, 2, 25)։

41 Ըստ Հերոդոտի՝ Կյուրոսը զոհվել էր մասագետների դեմ ուղղված արշավանքում (Her. I, 211), ըստ Ստրաբոնի՝ սակերի (Strab. XI, 8, 5), ըստ Բերոսոսի՝ գահերի (FHG, II, p. 505)։ Այս մասին մանրամասն տես՝ И. В. Пьянков, К вопросу о маршруте похода Кира II на массагетов («Вестник древней истории», 1964, № 3, с. 115—130).

բոսը վիրավորվում է և վախճանվում։ Իմանալով այդ մասին, սկյութների Ամորգոս թագավորն իր ցեղից 20 հազար ձիավորով գալիս է օգնության, և պարսիկները հաղթանակ են տանում[42]։ *Ակնառու է, որ Ամորգոս թագավորի սկյութները ոչ այլ ոք են, եթե ոչ Հերոդոտի նշած ամյուրգիական սակերը, որոնք նույնանում են Բեհիսթունյան արձանագրության Հաումավարգա սակերի հետ*[43]։ *Դրանք Աքեմենյան պետությանը ենթակա սակերն էին, ի տարբերություն Տիգրախաուդա սակերի, որոնք ապրում էին Աքեմենյանների սահմաններից դուրս։ Եթե նրանք մոտիկ էին դերբիկներին, ուրեմն պիտի ապրած լինեն Կասպից ծովի հարավ-արևելյան ափերի մոտ։ Ուշ շրջանի աշխարհագրական երկերն այս ափերին հիշում են սկյութամասագետական, այսինքն սակական զանազան ցեղերի՝ ապարնների, դահերի, դերբիկների կամ ուղղակի սակերի*[44]։ *Պտղոմեոսը Կասպից ծովի արևելյան ափերի միջնամասում տեղադրում է Սագարաուկե երկիրը (նրան հետևելով՝ ալն հիշում է նաև «Աշխարհացույցը»)*[45]։ *Վերջապես, Սակա մարզպանության արևմտաթուրքմենական տեղադրությունն է հաստատում Դարեհ I-ի եգիպտոսյան արձանագրությունը*[46]։ *Վերջինս պարունակում է Աքեմենյան պետության մասերը հանդիսացող 24 երկրների (սատրապությունների) ցուցակ, ուր 12-րդ համարի տակ կարդում ենք. «Ճահիճների սակեր և դաշտերի սակեր»*[47]։ *Ճահիճների հիշատակումը ստիպում է այս սակերին համադրել մասագետական այն ցեղերի հետ, որոնց Հերոդոտը տեղադրում է Կասպից ծովի արևելյան ափերին՝ Արաքս գետի (ուրիշ հեղինակների Յաքսարտն է կամ Օքսը) ճահճոտ գետաբերանում*[48]։ *Այսպիսով, հերոդոտյան XV սատրապության սակերն ու կասպերը Կասպից ծովի հարավ-արևելյան ափի բնակիչներն էին*[49]։ *5. Հերոդոտի հիշատակած XI սատրապությունը Կասպից ծովի հարավային ափերին տեղադրող ուսումնասիրողները նրա արևմտյան սահման են համարում Կուր և Արաքս գետերը։ Սակայն Հերոդոտի որոշ վկայություններ թույլ են տալիս ենթադրել, որ արևմտյան սահմանը պիտի դնել շատ ավելի արևելք։ Ըստ Պատմահոր՝ Մարաստանը սահմանակից էր Կասպից ծովին։ Նրա պատմելով, սկյութները Հյուսիսային Կովկասից Կասպից ծովի ափերով արշավում են դեպի հարավ և անցնելով Կովկասյան լեռների մոտով, հանդիպում են մարերին ու մարտում հաղթում նրանց*[50]։ *Մեկ այլ հատվածում Հերոդոտը գրում է, թե Մարաստանից արևելք տարածվում էր Կասպից ծովը*[51]։ *Եթե այս վկայությունները հավաստի են, ապա անհրաժեշտ է Աքեմենյանների X՝ Մարաստանի, սատրապության մեջ մտցնել Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերը, ուր ապրում էին անտիկ աղբյուրների հիշատակած կադուսները։ Այդ*

---

[42] Ctes. Pers. 29, 6—7.

[43] М. А. Дандамаев, Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.), М., 1963, с. 107, 115—116.

[44] Strab. XI, 7, 1; 8, 2; 8, 8; Plin. Nat. Hist. VI, 48; Pomp. Mela. III, 39.

[45] Ptol. Geogr. VI, 14, 14; *«Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ, յաւելուածովք Նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 12։*

[46] *Այդ արձանագրության հրատարակությունը, ֆրանսերեն թարգմանությունը և բնութագրումը տե՛ս* J. Yoyotte, Les inscription hiérogliphique. Darius et l'Égypte („Journal Asiatique", t. 260, P., 1972, f. 3 - 4, p. 253—266).

[47] *Նույն տեղում, էջ 258։*

[48] Her. I, 202. *Հմմտ. նաև* Her. I, 201—204; IV, 40; Strab. XI, 8, 6.

[49] *Սակա սատրապությունը Արևմտյան Թուրքմենիայում են տեղադրում Գ. Ա. Ստրատանովսկին (նշվ. աշխ., էջ 517, ծան. 62), «Աքեմենյան տերությունը» քարտեզի հեղինակը* (Карты к учебнику «История Древнего Востока», М., 1979, с. 10) *և Վ. Վ. Ստրուվեն* («Всемирная история», т. 2, М., 1956, с. 28, 29 (карта).

[50] Her. I, 117.

[51] *Նույն տեղում, IV, 37—40։*

դեպքում կասպերի ապրած XI սատրապության արևմտյան սահմանը հարմար է անցկացնել Սեֆիդրուդ գետով։

Այսպիսով, XI և XV սատրապությունները գտնվում էին Կասպից ծովի հարավային և հարավ-արևելյան ափերին։ Բեհիսթունյան արձանագրությունը, որը չգիտի կասպերին, այս տարածքում հիշում է Սակա և Հիրկանիա (վերջինը՝ Պարթևքի սատրապության կազմում) մարզերը[52]։ Նշենք, որ Աքեմենյան մարզերի նկարագրության հատվածում Հերոդոտը չգիտի հիրկաններին, այնպես որ Հիրկանիայի տեղում XI սատրապության տեղադրությունը չի կարելի հակասություն համարել։

Հերոդոտի տվյալների քննության սկզբում մենք հույս հայտնեցինք, թե հենց դրանք պիտի ռեալ պատկերացում տան կասպերի մասին, որպես էթնիկական ուրույն միավորի։ Սակայն քննությունից պարզվեց, որ Պատմահոր վկայությունները ոչ թե հաստատում, այլ հիմք են տալիս մերժելու կասպերի էթնիկական ուրույնության գաղափարը։ Հերոդոտի նշած կասպերը Կասպից ծովի հարավային ու հարավ-արևելյան ափերի բնակիչներն են, որոնք գրեթե ժամանակակից ուրիշ աղբյուրներում (Հեկատեոս, Բեհիսթունյան արձանագրություն, Կտեսիաս, Քսենոփոն, Ալեքսանդրի ուղեկիցներ) հանդես են գալիս էթնիկապես ուրույն միավորներով (հիրկաններ, մարդեր, տապուրներ և այլն)։ Հերոդոտի տվյալներով չի հաստատվում նաև Ստրաբոնի ու Պլինիուսի արտահայտած և հետազոտողների ընդունած այն տեսակետը, թե Կասպից ծովն իր անունը ստացել է նրա ափերին ապրող կասպերից։ «Պատմության» մեջ ծովի անունն առկա է Կասպիա (ἡ Κασπίη) ձևով, որը չի նշանակում «Կասպերի ծով»։ Իսկ կասպերի անվան Κασπίοι ձևը՝ շնորհիվ առաջին յոտայի նշանակում է կասպիացիներ։ Դա նշանակում է, որ ցեղանունն է առաջացել ծովանունից և ոչ թե հակառակը։ Այսպիսով, Հերոդոտի հիշատակած կասպերը ծովափնյա շրջանի բնակիչներն են՝ հիրկանները, տապուրները, մարդերը և այլն։ Այս տեսակետը վերջնականորեն հիմնավորվում է Կուրցիուս Ռուֆուսի (մ. թ. I դ.) վկայություններով։ Նկարագրելով Դարեհ III-ի բանակը Գավգամելայում՝ Կուրցիուսն այլ ջոկատների կողքին հիշատակում է նաև կասպերի ջոկատը, որի հրամանատարն էր Ֆրադատեսը[53]։ Հեղինակը կասպերին այլևս չի հիշատակում, բայց Ֆրադատեսի մասին խոսում է։ Պարզվում է, որ նա հիրկանների, տապուրների ու մարդերի սատրապն էր[54]։ Ուրեմն, Կուրցիուսը, Հերոդոտի նման, կասպեր է անվանում Աքեմենյանների Հիրկանիա սատրապության ժողովուրդներին։ Այս հեղինակի տեղեկությունը հաստատում է նաև վերը բերված մեր տեսակետը Հերոդոտի նշած XI սատրապության արևմտյան սահմանի մասին։ Այժմ կարելի է հաստատապես ասել, որ այն մարդերին բաժանում էր կադուսներից, անցնելով Սեֆիդրուդ (Պողոմեոսի՝ Ամարդոս) գետով։

Ուշ շրջանի որոշ հեղինակներ կասպերին տեղադրում են այն մարզում, ուր ապրում էին Հերոդոտի նշած XV սատրապության՝ այսինքն Կասպից ծովի հարավ-արևելյան ափի, կասպերը։ Նախ և առաջ դա վերաբերում է մ. թ. III դ. հունարեն ստեղծագործող հռոմեացի հեղինակ Էլիանոսին։ Իր «Կենդանիների մասին» աշխատության մեջ նա մի քանի անգամ հիշատակում է կասպերին և Կասպիական երկիրը, աղբյուր ունենալով Ամյոնտեսին (մ. թ. ա. IV դ.), Կտեսիաս Կնիդացուն և ուրիշների։ Հետևելով ավանդական տեսակետին՝ ուսումնասիրողները նրա հիշատակած կասպերին տեղադրում են Փայտակարանում[55]։ Էլիանոսի տվյալներից նրանք նման տեղադրության

---

[52] Beh. I, 12—17; II, 92—98.

[53] Curt. IV, 12, 9.

[54] *Նույն տեղում*, VI, 4, 23—24; 5, 11; 5, 21; VIII, 3, 17. *Հմմտ.* Arr. Anab. IV, 18, 2։

[55] К. В. Тревер, *նշվ. աշխ.*, *էջ 75*; К. Алиев, К вопросу об источниках и литературе по истории древней Кавказской Албании («Вопросы истории Кавказской Албании», Баку, 1962, с. 11).

հիմք են մատնանշում հետևյալ հատվածը. «Ես լսել եմ, որ Կասպիական հողում կա հսկայական մի լիճ, ուր ապրում են մեծ ձկներ, որ կոչվում են «սրաքիթներ»։ ...Կասպերը բռնում են նրանց, ...աղում կամ չորացնում, հետո բեռնում են ուղտերին ու տանում Էկբատանա...»[56]։ Հիշված «մեծ լիճը» հետազոտողները նույնացնում են Ուրմիայի հետ։ Սակայն ներկայացված ձկան հատկանիշներից երևում է, որ դա թառափն է, որն Ուրմիայում չկա և չի կարող լինել՝ ջրի մեծ աղիության պատճառով։ Թառափն ապրում է Կասպից ծովում, ընդ որում արդյունահանվել է հնագույն ժամանակներից[57]։ Թվում է, թե Էլիանոսի հիշատակած «մեծ լիճը կասպերի երկրում» նույն Կասպից ծովն է։ Պտղոմեոսից հետո, որ ցույց տվեց Կասպից ծովի օվկիանոսից կտրված, այսինքն՝ լիճ լինելը, գոնե լատինական գրականության մեջ հանդիպում են օրինակներ, ուր Կասպից ծովը կոչվում է լիճ[58]։

Միևնույն ժամանակ, Էլիանոսի հաղորդումների որոշ մանրամասներ մատնանշում են Կասպից ծովի հարավ-արևելյան ափերը։ Այսպես, նրա աշխատության հատվածներից մեկում խոսվում է կասպերի երկրի անհատնում գետերի մասին. «Ամյունտեսն ավելացնում է նաև այն, որ որոշակի ժամանակ այնտեղ հայտնվում են անթիվ բազմությամբ մկներ և որպես դրա ապացույց բերում է այն փաստը, որ չնայած այնտեղի անհատնում (ἀενάων) գետերը հոսում են մեծ արագությամբ, սակայն մկներն անվախ լողալով անցնում են դրանք՝ ատամներով բռնած մեկը մյուսի պոչը»[59]։ «Անհատնում գետեր» արտահայտությունը կարող ենք վերագրել միայն մի՛ջինասիական գետերին (Օխ, Օքս, Յաքսարտ-Ատրեկ, Ամու-Դարյա, Սիր-Դարյա), որոնք, ըստ հին ավանդության, թափվում էին Կասպից ծով և որոնց մեծությունը հիացնում էր անտիկ հեղինակներին։ Ըստ Ստրաբոնի՝ Ալեքսանդրի ուղեկիցներից Արիստոբուլոսը «Օքսը հայտարարում է Ասիայում իր տեսած գետերից ամենամեծը՝ հնդկականներից հետո»[60]։ Կասպից ծովի նախ և առաջ հարավ-արևելյան ափերն է մատնանշվում նաև Էլիանոսի նկարագրած կենդանիներից ուղտը։ Սրա նկարագրությունը վերցված է Կտեսիասից[61], իսկ Կտեսիասի նշած Կասպիանան, ինչպես տեսանք, ընկած էր Էլբուրսի հյուսիսային լանջերին։

Հավանական է թվում, որ այս նույն հարավ-արևելյան ափի բնակչությունը նկատի ունեն Ստրաբոնի այն տեղեկությունները, որոնցում պատմվում է կասպերի բարբարոսական բարքերի մասին։ Ահա դրանցից մեկը. «Հնում սոգդիացիներն ու բակտրիացիները կենցաղով ու բարքերով քիչ էին տարբերվում քոչվորներից, թեպետ բակտրիացիների բարքերն ավելի մեղմ էին։ Սակայն նրանց մասին էլ Օնեսիկրիտեսը (Ալեքսանդրի զորավարներից

---

[56] Aelian. De anim. XVII, 32.

[57] Հմմտ. «Жизнь животных», «Рыбы», т. 4, часть I, М., 1971, с. 108.

[58] Հմմտ. Amm. Marzell. XXIII, 5, 16. Եպիփան Կիպրացու «12 թանկարժեք քարերի մասին» աշխատության հին լատիներեն թարգմանության մեջ (բնագիրը չի պահպանվել) կարդում ենք. «Հասպիսը հայտնաբերվել է իբերների և հիրկան հովիվների կողմից, որոնք ապրում են Կասպիական երկրի և լճի մոտ» (В. В. Латышев, նշվ. աշխ., հ. 1, էջ 712)։ Պահպանվել են այս երկի նաև հայերեն և վրացերեն թարգմանությունները («Սրբոյն Եպիփանու ասացեալ զանազանս վասն ականց պատուականաց», «Բազմավեպ», 1856, էջ 46—50), Შატბერდის კრებული X საუკუნისა", გამოსაცემად მოამზადეს გ. გიგინეიშვილმა და ვლ. გიუნაშვილმა, თბილისი, 1979, გვ. 127—175), սակայն դրանցում մեզ հետաքրքրող հատվածը կիսատ է։

[59] Aelian. De anim. XVII, 17.

[60] Strab. XI, 7, 3. Հմմտ. Arr. Anab., VII, 16, 3.

[61] Հմմտ. A. Herrmann, Kaspioi 2, S. 2274, К. Ган, Известия древних греческих и римских писателей о Кавказе («Сборник материалов по описанию местностей и племён Кавказа», вып. 4, Тифлис, 1884, с. 25—26).

մեկը—Ա. Հ.) պատմում է ոչ այնքան լավ բաներ. ծերացած կամ հիվանդությունից լրիվ հյուծված մարդկանց [նրանք] կենդանի նետում էին հատուկ այդ նպատակի համար պահվող շներին, որոնք տեղացիների լեզվով կոչվում են «թաղողներ»... Այդ սովորությունը ոչնչացրեց Ալեքսանդրը։ Մոտավորապես նույնը պատմում են նաև կասպերի մասին. նրանց մոտ 70 տարին անցած ծնողներին փակի տակ են դնում և սովամահ անում»[62]։ Ինչպես երևում է, կասպերի, բակտրիացիների, սոգդիացիների, հիրկանների, դերբիկների, տապուրների և ուրիշների մասին նման պատմությունների աղբյուրն Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկիցների տեղեկություններն են (Օնեսիկրիտես և ուրիշներ)։ Այս շարքի բոլոր ժողովուրդները միջինասիական են, ինչի մասին ուղղակի ասում է Ստրաբոնը[63]։ Ուրեմն, Ստրաբոնի հիշատակած կասպերին էլ պետք է համարել Կասպից ծովի հարավ-արևելյան ափի բնակիչներ։

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ կասպեր անվան տակ չի կարելի հասկանալ էթնիկական ուրույն միավոր։ Կասպերը Կասպից ծովի այս կամ այն ափամերձ հատվածի բնակչությունն է։ Պոմպոնիուս Մելայի մի տեղեկությամբ կասպեր (կասպիաններ) են անվանվում Կասպից ծովի բոլոր ափերի բնակիչները («Սկյութները զբաղեցնում են [Ասիայի] ողջ հյուսիսային ափը մինչև Կասպիական ծովածոցը։ ...Նրանց հարևան կասպիանները շրջապատում են Կասպիական ծովածոցը, նրանցից այն կողմ ապրում են ամազոնուհիները...»)[64]։ Կասպերին բավականին մեծ տարածք է վերագրում նաև մ. թ. ա. I դ. սկզբի հեղինակ Արտեմիդորոսը («Կասպից ծովի մասին պատմում է Արտեմիդորոսը «Համառոտ աշխարհագրության» մեջ։ Այն գտնվում է օվկիանոսի մոտ. նրա ափերին ապրում է Կասպիական կոչված ժողովուրդը, որը հարևան է պարսիկներին»)[65]։ Կասպեր ցեղանունն էլ առաջացել է Կասպից ծովի անունից, թեև հին հեղինակներից այդ կարծիքին է միայն Ստեփանոս Բյուզանդացին[66]։ Թե ինչպես է ծագել ծովի անունը, առայժմ պարզված չէ։ Այսպիսով, անտիկ ոչ մի հեղինակ և ոչ էլ նրա աղբյուրը երբևէ չի հանդիպել էթնիկապես ուրույն կասպ ցեղի։ Վաղ հեղինակների մոտ (Հերոդոտ, Ալեքսանդրի ուղեկիցներ) կասպեր տերմինն օգտագործվում է նշանակելու լոկ մերձափնյա բնակիչներին (ինչպես պոնտացիներ տերմինը՝ Սև ծովի ափերի բնակչությանը)։ Միայն ուշ շրջանում որոշ հեղինակներ (Ստրաբոն, Պլինիուս)՝ հանդիպելով կասպեր տերմինին այս ու այն ենթատեքստում, դատողություններ են կատարում նրանց էթնիկական ուրույնության, ծովի այս կամ այն ափին բնակվելու (համաձայն աղբյուրի ենթատեքստի) և ծովին իրենց անունը տալու մասին (ըստ երևույթին՝ հիրկաններ-Հիրկանյան ծով անցման համանմանությունից)։

Նույնը պետք է ասել նաև Կասպիանա տեղանվան մասին։ Այս տերմինն էլ, որ նշանակում է կասպերի կամ Կասպիական մարզ, անկասկած առաջ է եկել ծովի անունից (այդպես նաև՝ լեռներն ու դարպասները) և տրվել նրա այս կամ այն ափին։ Ստրաբոնի XI, 14, 5 հատվածում հիշատակված Կասպիանան Մարաստանի, իսկ մ. թ. ա. II դարից՝ Մեծ Հայքի, ծովափնյա մարզն էր Փայտակարան աշխարհը։ Կտեսիաս Կնիդացու Կասպիանան Կաս-

---

[62] Strab. XI, 11, 3. Հմմտ. նաև Strab. XI, 11, 8. Այս կիսահնաբված պատմությունները ընկել են նաև քրիստոնյա հեղինակների (Պորփյուր, Եվսեբիոս Կեսարացի, Եվսեբիոս Հիերոնիմոս, Թեոդորետոս) գործերը (տե՛ս В. В. Латышев, նշվ. աշխ., հ. 1, էջ 657, 663, 783, հ. 2, էջ 370)։

[63] Strab. XI, 8, 1; 11, 8.

[64] Pomp. Mela. I, 11—12.

[65] В. В Латышев, նշվ. աշխ., հ. 1, էջ 432։ Պարսիկներ ասելով պետք է հասկանալ Իրանի ամբողջ բնակչությունը, քանի որ Պարս նահանգը հեռու էր Կասպից ծովից։

[66] Նա գրում է. «Կասպից ծով, նրանից՝ կասպեր և Կասպից լեռ, և Կասպիական այրեր, և Կասպիական երկիր, և Կասպիոն։ Անվանվում է նաև Հիրկանյան» (Steph. Byzant. s. v)։

պից ծովի հարավային ափի շերտն էր։ Թվում է, թե Մելայի նշած կասպիաններ տերմինը (կասպերի փոխարեն) վերցված է մի աղբյուրից, որում Կասպիանա էր կոչված ծովի ամբողջ ափագիծը, ամբողջ «Կասպիական երկիրը»։

Նման պարագաներում դժվար չէ համոզվել, որ Աղվանքի նկարագրության մեջ Ստրաբոնի հիշատակած Կասպիանան ոչ թե Փայտակարանն է, այլ հենց Աղվանից թագավորության ծովափնյա մարզը (Կուրից հյուսիս՝ մինչև Դերբենդի լեռնանցքը)։ Ստրաբոնի համապատասխան պարագրաֆը սկսվում է աղվանական բանակի նկարագրությամբ (թվաքանակը, զենքերն ու հանդերձավորումը)։ Այստեղ, անկասկած, Ստրաբոնի աղբյուրն է Թեոփանես Միթիլենացին՝ Պոմպեոսի արշավանքի մասնակիցը, որի տեղեկություններն աշխարհագետը լայնորեն օգտագործում է Կովկասի նկարագրության հատվածներում[67]։ Խիստ հավանական է, որ Թեոփանեսինն է նաև պարագրաֆի հաջորդ դարձվածքը՝ «Աղվանքի մի մարզն է Կասպիանան...»։ Թվում է, թե դժվար չէ վերականգնել Միթիլենացու այն հատվածը, ուր Ստրաբոնը հանդիպել է այդ տեղեկությանը։ Մեր կարծիքով, Թեոփանեսն այդտեղ պատմել է Պոմպեոսի աղվանական արշավանքի վերջի մասին, երբ հռոմեացիները թագավորական բանակը պարտության մատնելուց հետո շարժվեցին դեպի Կասպից ծով։ Արշավանքի այդ վերջին փուլի մասին պատմող Պլուտարքոսը, որի աղբյուրը նույն Թեոփանեսն է[68], գրում է, թե ճանապարհին թունավոր սողունների շատության պատճառով Պոմպեոսը հրաժարվեց ծովին հասնելու մտքից և ետ վերադարձավ, երբ մինչև ծով մնացել էր ընդամենը երեք անցում[69]։ Ծովին մոտ լինելու մասին վկայություն է թողել նաև Պոմպեոսի արշավանքի մեկ այլ մասնակից՝ Մարկոս Վառոնը։ Այդ մասին Պլինիուս Ավագի մոտ կարդում ենք. «Որ բուն Կասպից ծովում ջուրը քաղցր համ ունի, այդ մասին հաղորդում է Ալեքսանդր Մեծը. նմանապես և Մարկոս Վառոնն է պնդում, որ այդպիսի [ջուր] բերվեց Պոմպեոսին, երբ նա ռազմական գործողություններ էր վարում [ծովի] մոտերքում՝ Միհրդատյան պատերազմի ժամանակ»[70]։ Վերջապես IV դ. հեղինակ Ավրելիուս Վիկտորը «Հռոմի նշանավոր այրերի մասին» երկում գրում է. «ռազմական գործողությունների ժամանակ Պոմպեոսը թափանցեց աղվանների, կոլխերի, հենիոխների, կասպերի և իբերների մոտ... ամենուր իր նկատմամբ վախ հարուցելով»[71]։

Բերված փաստերից հետևում է, որ Պոմպեոսն Աղվանքով դեպի Կասպից ծով արշավելիս մտել է այդ երկրի ծովափնյա այն մարզը, որը հռոմեացիներին ներկայացվել է որպես Կասպիական, Կասպերի կամ Կասպիանա մարզ։ Թեոփանես Միթիլենացու կողմից հենց այս հանգամանքի արձանագրումն է, որ մեր կարծիքով հիմք է ծառայել Ստրաբոնի քննվող տեղեկությանը։ Վերևում տեսանք, որ հենց այս աղվանական ափին՝ Կովկասյան լեռների հարևանությամբ էին կասպերին տեղորոշում Էրատոսթենեսի, Ստրաբոնի, Մելայի ու Դիոնեսիոսի մի շարք վկայություններ։ Ավելացնենք նաև, որ անտիկ Աղվանքի ծովափնյա մարզը Կասպք (Կասպիանայի հայերեն տարբերակը) են կոչում հայկական մի շարք աղբյուրներ։

Հայկական աղբյուրներում Կասպք (Կասբք, Կազբք) անվան տակ հայտնի է նախ և առաջ Փայտակարան աշխարհը։ Նրան են վերաբերում Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Խորենացու, Ասողիկի համապատասխան հատ-

---

67 Strab., XI, 4, 3; 5, 1; Հ. Սվազյան, Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին, («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1)։

68 Plut. Pomp. XXXVII; XLIX.

69 Նույն տեղում, XXXVI։

70 Plin. Nat. Hist. VI, 51.

71 В. В. Латышев, նշվ. աշխ., հ. 2, էջ 317։

վածները՝ Կասպքի հիշատակությամբ[72]։ «Գահնամակում» և «Զորանամակում» հիշատակվում է Կասպեից (Կասպեցի) նախարարությունը, որը, անկասկած, Փայտակարանի իշխանական տունն է[73]։ Սակայն նշված և հայկական այլ աղբյուրներում Կասպք տերմինը վերաբերում է նաև Կուրից հյուսիս ընկած՝ Կասպից ծովի առափնյա մարզին ու դրա բնակչությանը։ Այսպես, Ագաթանգեղոսի մոտ կարդում ենք. «Վաղվաղակի ի թիկունս հասանէին... Աղուանք, Լփինք, Ճիղպք, Կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց»[74]։ Արևմուտքից արևելք այս թվարկումը ենթադրում է կասպերի տեղորոշում լփիններից ու ճիղբերից արևելք, այսինքն ծովափի հատվածում[75]։ Այլ աղբյուրներ այս հատվածում տեղադրում են Մասքթաց թագավորությունը, Բաղասական աշխարհը, լեռնական ցեղերին։ Հասկանալի պատճառներով Ագաթանգեղոսի տեղեկությունը պիտի մեծ տարածում գտներ հայ այլ հեղինակների մոտ, և, իսկապես, նրանից հետո մի շարք աղբյուրներում հանդիպում ենք մոտավորապես նույն թվարկմանը։ «Աղվանից պատմության» մեջ պահպանված VII դ. մի աղբյուրում, ուր նկարագրվում է Մաշտոցի առաքելությունն Աղվանից կողմերում, հեղինակը մասնավորապես գրում է. «...ձդէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս և ի Լփինս և ի Կասպս և ի դուռն Զորայ...»[76]։ Հետաքրքիր այս տեղեկությամբ հնարավոր է դառնում պարզել, որ տվյալ Կասպքի հյուսիսային սահմանն ընկնում էր մինչև Զորա (Դերբենդ)։ Անգամ X դ. Խաչիկ Արշարունեցի կաթողիկոսը դավանաբանական հարցերում հույներին պատասխանելիս օգտագործում է Ագաթանգեղոսի տերմինաբանությունը և գրում. «...և այլ ևս բազմութիւնք ազգաց, որք ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի, որպիսին ամենայն Հայք, Աղուանք, Լփինք, Կաղբք (ձեռագրում՝ Կաղփք), Ճիղբք (ձեռագրում՝ Կիղբք), Ասորեստանեայքս»[77]։ «Աշխարհացույցի» համառոտ խմբագրության մեջ հյուսիս-արևելյան Կովկասի ցեղերի թվարկման մեջ հիշվում է կասբք ցեղը[78]։ Այդ հանգամանքն արդյունք է, ըստ ամենայնի, Ագաթանգեղոսին հանգող ավանդույթի և լեռնականների մեջ կասպ անունով ժողովուրդ փնտրելու առիթ լինել չի կարող։ Նշենք նաև, որ Արևելյան Անդրկովկասում «Կասպիա երկիր» է հիշում Անանուն Ռավենացին[79]։ Այդ մարզը, Բ. Հարությունյանի իրավացի կարծիքով, տեղորոշվում է Կուրից հյուսիս՝ Կուրի, Լփինքի և Զորի միջև[80]։

Այսպիսով, սկզբնաղբյուրների կասպերին և Կասպիանա (Կասպք) մարզը հիշատակող հատվածների համադիր քննությունը ցույց է տալիս, որ

---

72 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 439, «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 136, 177, «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ստ. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 182, «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», պատրաստեց Ստ. Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 115։

73 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 249, 251.

74 Ագաթանգեղոս, էջ 17։ Նույնը կրկնում է Ուխտանեսը (Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց. Կաղարշապատ, 1871, էջ 70)։

75 Հմմտ. Բ. Հարությունյան, Լփինքի տեղադրության հարցի շուրջը («Բանբեր Երևանի համալսարանի», 1981, № 1, էջ 111)։

76 «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860, էջ 70։

77 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 322։

78 Ա. Գ. Արրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 347։

79 Rawennatis Anonymi Cosmographia et Guidonis Geographica. Ed. M. Pinder, G. Parthey, Berolini, 1962, p. 68 (II, 12).

80 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 122։

ա) Կասպերի ավանդական փայտակարանյան տեղադրությունը սկզբնաղբյուրների անժխտելի հեևանք չէ, այլ լոկ Ստրաբոնի վկայություններից մեկի և հայկական աղբյուրների տեղեկությունների համընկնման արդյունք. ընդհանուր առմամբ աղբյուրները կասպեր են հիշում Կասպից ծովի բոլոր ափերին. բ) անտիկ հեղինակներից ոչ մեկը չի տեսել կասպ անունով էթնիկապես ուրույն ժողովրդին. կասպեր տերմինն առաջացել է Կասպից ծովի անունից և տրվել ծովափնյա բնակչությանը (ինչպես պոնտացիներ տերմինը Սև ծովի ափի բնակչությանը). գ) Կասպիանա տերմինը նշանակում է Կասպից ծովի ափին ընկած շրջան։ Այդ անունով աղբյուրներում վկայված են երեք տարբեր մարզեր. Կտեսիասի Կասպիանան ընդգրկում է ծովի հարավային ափերը։ Ստրաբոնի XI, 14, 5 հատվածի Կասպիանան Մեծ Հայքի Փայտակարան աշխարհն է։ Նույն հեղինակի XI, 4, 5 հատվածի Կասպիանան անտիկ Աղվանքի թագավորության ծովափնյա շրջանն է՝ ընկած մոտավորապես Կուրի և Դերբենդի անցքի միջև. դ) հայկական աղբյուրները Կասպք (կասպեր, Կասպիանա) անունով կոչում են ինչպես Փայտակարանը, այնպես էլ հյուսիս-կուրյան մերձափնյա մարզը և երկու մարզերի բնակիչներին։

О ЛОКАЛИЗАЦИИ КАСПИЕВ И ОБЛАСТИ КАСПИАНА (КАСПК)

АЛЕКСАН АКОПЯН

Резюме

Исследование всех доступных первоисточников о каспиях и Каспиане позволяет заключить следующее.

1. Традиционная локализация каспиев в области Пайтакаран является не безоговорочным результатом сведений первоисточников, а лишь следствием совпадения одного свидетельства Страбона со свидетельствами армянских источников. Все источники, вместе взятые, позволяют локализовать каспиев по всему побережью Каспийского моря.

2. Ни один античный автор не видел этнически обособленного народа под названием каспиев. Термин «каспии» образовался от названия Каспийского моря и означал прибрежное население (как термин «понтийцы»—причерноморское население), хотя поздние авторы воспринимали его как название отдельного племени.

3. Термин «Каспиана» означает район, расположенный на берегу Каспийского моря. В источниках засвидетельствованы три области с этим названием. Каспиана Ктесия Книдского лежит на южных берегах Каспийского моря; Каспиана отрывка XI, 14,5 Страбона соответствует древнеармянской области Пайтакаран; Каспиана отрывка XI, 4,5 того же автора является прибрежной областью античной Кавказской Албании и лежит к северу от реки Куры.

4. Армянские первоисточники называют Каспком (каспии, Каспиана) как Пайтакаран с его населыниками, так и прибрежную область и её население к северу от реки Куры.